

Օրենքներ սահմանների մասին

Օրենք 1. Ցանցի և հունձքի օրենքը. մենք անձնական պատասխանատվություն ենք կրում մեր գործողությունների և այդ գործողությունների հետևանքների համար: Գաղ. 6:7-8

Օրենք 2. Պատասխանատվության օրենքը. Մենք պատասխանատու ենք մեր զգացմունքների, գործողությունների և վարքի համար: Երբ մենք պատասխանատվություն ենք վերցնում մարդկանց համար, մենք թող չենք տալիս, որ նրանք հասունանան: Գաղ. 5:13-14, Փիլ. 2:12-13

Օրենք 3. Ջրության և անզորության օրենքը. Մենք չենք կարող փոխել ոչ մի մարդու, բայց Աստծո օգնությամբ մենք կարող ենք փոխել ինքներս մեզ: Մատ. 5:23-24, 1 Դով. 1:9, Հակ. 4:7-10

Օրենք 4. Այլ մարդկանց սահմանները հարգելու օրենքը. Մենք պետք է սովորենք լսել մարդկանց «ոչ»-ը: Մատ. 7:1-2; 12

Օրենք 5. Շարժափոխների օրենքը. Սահմաններն օգնում են մեզ վերահսկել մեր կյանքը և կատարել այն, ինչի համար մենք ստեղծվել ենք՝ սիրելով: Պատշաճ շարժափոխների դեպքում, մենք ազատություն կունենանք և պատասխանատու կլինենք: 2 Կոր. 9:7

Օրենք 6. Գնահատման օրենքը. Գնահատել այն ցավը, որն առաջանում է ձեր սահմանների պատճառով: Կա տարբերություն ցավի և վնասի միջև: Եփես. 4:25, Մատ. 18:15-17, Եբր. 12:11

Օրենք 7. «Նախաձեռնող և հակազդող սահմանների» օրենքը. Նախաձեռնելը նշանակում է՝ ազատորեն ընտրել սիրելով, վայելելը և մեկը մյուսին ծառայելը: Հակազդելը նշանակում է՝ թող տալ, որ այլ մարդիկ սահմանեն և որոշեն, թե ով ենք մենք և ինչ պետք է անենք: Գաղ. 5:13-17, Ուսակաց 17:9

Օրենք 8. Նախանձի օրենքը. Նախանձը նշանակում է՝ տեսնել բարին որպես մի բան, որը մենք չունենք: Հակոբոս 4:2

Օրենք 9. Գործունեության օրենքը. Սահմանները ստեղծվում են մեր կյանքում, երբ մենք ինչ-որ բան ենք անում: Մենք պետք է նախաձեռնող լինենք և պատասխանատվություն ստանձնենք մեր զգացմունքների, վերաբերմունքի և վարքի համար: Եբր. 10:38-39, Մատ. 7:7-8

Օրենք 10. Ցուցադրման օրենքը. Ներքին սահմանները պետք է ակնհայտ լինեն, և դրանց մասին պետք է տեղեկացնել այլ մարդկանց: Եփես. 4:25-26, 5:13-14

Ընդհանու Չարգեք

Ինչպես մենք կարող ենք ողջամիտ սահմաններ որոշել մեր կյանքներում և միաժամանակ հոգալ մարդկանց մասին քրիստոսանման կերպով:

Հաջորդ ամսվա ընթացքում ուշադրություն դարձրեք, թե քանի՞ անգամ եք «այո» ասում, երբ ցանկանում եք «ոչ» ասել: Երբ ձեզ մոտ բոլոր նման դեպքերը հաջորդ ամսվա (կամ շաբաթվա) ընթացքում: Ինչ է տեղի ունենում արդյունքում:

Ո՞ր օրենքի վրա եք դուք աշխատելու առաջիկա շաբաթվա ընթացքում:

Հարցրեք ձեզ, թե ինչի՞ համար պետք է ավելի շատ պատասխանատվություն ստանձնեք, իսկ ինչի՞ համար՝ ավելի քիչ: Այս «Տաս օրենքներից» ռին է ամենից շատ ազդում այդ սահմանի վրա: Ինչ կարող եք անել, որպեսզի փոխեք այդ իրավիճակը կամ փոխհարաբերությունը:

Ընտրեք այս առասպելներից մեկը՝ մանրամասնորեն ուսումնասիրելու համար: Թվարկեք բոլոր միջոցները, որոնցով դուք ներկայումս արձագանքում եք տվյալ առասպելին: Թվարկեք բոլոր հնարավոր քայլերը, որոնք դուք կարող եք ձեռնարկել, որպեսզի ավելի դրական արձագանք ունենաք ապագայում:

Անվանեք սահմանների հետ կապված որևէ խնդիր ձեր կյանքում: Ո՞ր «Վերականգնման քայլին» եք դուք հասել: Ինչ պետք է անեք՝ առաջ շարժվելու համար:

Կենտրոնացեք ներման վրա: Կազմեք «Ներման ցուցակ»՝ ընդգրկելով այն դեպքերը, երբ դուք չեք ներել ինքներդ ձեզ և դրա պատճառները, նաև այն դեպքերը, երբ այլ մարդիկ ցավ են պատճառել ձեզ: Գրի առեք ձեր զգացմունքները և մտքերն այդ հիշողությունների մասին:

Առասպելներ սահմանների մասին

Առասպել 1. «Երբ ես «ոչ» եմ ասում կամ որևէ սահման եմ որոշում, ես եսասեր եմ» (կա տարբերություն եսասեր և տնտես լինելու միջև): 2 Կոր. 12:7-10; Փիլ. 4:12; 13, 19; 2 Կոր. 5:10

Առասպել 2. «Ես անհնազանդ եմ, երբ «ոչ» եմ ասում» (մենք հաշվետու ենք Աստծուն, ոչ թե մարդկանց): Ուվսե 6:6; 2 Կոր. 9:7

Առասպել 3. «Եթե ես սահմաններ որոշեմ, ես կկորցնեմ ինչ-որ մեկի սերը կամ ինձ ցավ կպատճառեն այդ պատճառով» (այն, որ մենք վախենում ենք լքված լինել՝ ապրելով առանց սահմանների, սովորաբար նշանակում է, որ մենք չունենք իրական կապ այլ մարդկանց հետ): Մատ. 19:22

Առասպել 4. «Եթե ես սահմաններ որոշեմ, ես ցավ կպատճառեմ այլ մարդկանց» (սահմանները պաշտպանողական միջոցներ են. դրանք պահպանում են մեզ. մեր մտադրությունները կարևոր են): Մատ. 14:22-23; Դուկաս 6:26

Առասպել 5. «Սահմանները նշանակում են, որ ես բարկացած եմ» (իրականում, սահմաններն օգնում են մեզ ավելի քիչ բարկանալ): Հովի. 2:13-14

Առասպել 6. «Երբ մարդիկ սահմաններ են որոշում, դա վիրավորում է ինձ» (փոխհարաբերությունները բաղկացած են մարդկանց միացնող և բաժանող գործոնների հավասարակշռությունից, հենց այս հաջորդականությամբ): 2 Կոր. 7:8-9, Մատ. 7:12

Առասպել 7. «Որևէ սահման որոշելուց ես մեղքի զգացում ունեմ կամ վատ եմ զգում ինձ. չե՞ որ նրանք այնքան բան են արել ինձ համար» (սերը ձրի պարզ է՝ առանց գնապիտակի կամ պարտավորվածության): Հայտ. 2:4, 14, 20

Առասպել 8. «Սահմանները մշտական են» (սահմանները մշտապես կարող են փոփոխվել դրանք որոշողի կողմից): Հովսեան 3:10, Գործք. 15:37-39, 2 Տիմ. 4:11

Վերականգնման ընթացք

Քայլ 1. Որոշել հիվանդությունը: Դուք պետք է ընդունեք, որ խնդիր ունեք, մինչև որ կկարողանաք օգնություն ստանալ:

Քայլ 2. Շփվել. Անհրաժեշտ է շփում ունենալ Աստծո և այլ մարդկանց հետ:

Քայլ 3. Որոշել կարիքները. Ընդունեք, որ ձեր կյանքում կան չլրացված կարիքներ՝ կապված փոխհարաբերությունների, առանձնացված լինելու, կամ սահմանների հետ, բարին և չարը տարբերելու, կամ հասունության հետ:

Քայլ 4. Ընդունել բարին. Ընդունեք Աստծո շնորհը, որը մարմնավորված է մարդկանց մեջ:

Քայլ 5. Տրտմության արմատները. Խուսափեք նույնը կրկնելու հարկադրանքից:

Քայլ 6. Ներում. Ընդունեք Աստծո ներումը և, ձեր հերթին, ներեք ինքներդ ձեզ և այլ մարդկանց:

Քայլ 7. Պատասխանատվություն. Պատասխանատվություն ստանձնեք ձեր զգացմունքների, վերաբերմունքի և վարքի համար:


Քայլ 8. «Ոչ» ասել վատ բաներին. Սովորեք «ոչ» ասել «անվտանգ» մարդկանց, մինչև «վտանգավոր» մարդկանց «ոչ» ասելը:

Քայլ 9. Ձախտողում. Հոժարությամբ ընդունեք սա՝ որպես նոր բաներ փորձելու դժվարությունների մի մասը:

Քայլ 10. Վերադարձ քայլ 1-ին. Մի՛ վախեցեք ձեր ձախտողմից և պատրաստ եղեք կրկին սկսել ողջ վերականգնման ընթացքը:

HIS HOUSE

MINISTRIES



WHEN TO SAY YES
HOW TO SAY NO
TO TAKE CONTROL
OF YOUR LIFE

BOUNDARIES

Սահմաններ. Երբ ասել «այո». Ինչպես ասել «ոչ».

Dr. Henry Cloud & Dr. John Townsend

- Ինչ է սահմանը
- Ինչ այն չէ
- Աստված և սահմանները
- Ինչ կա իմ սահմանների ներսում
- Օրենքներ սահմանների մասին
- Առասպելներ սահմանների մասին
- Վերականգնման ընթացք

Սահմաններ. Երբ ասել «այո»․ ինչպե՛ս ասել «ոչ»․

Ինչ է սահմանը

Սահմաններն օգնում են մեզ որոշել այն, ինչ պատկանում է մեզ, որպեսզի մենք կարողանանք հոգալ դրա մասին։ Սահմաններն օգնում են մեզ «ամեն զգուշությունից առավել զգուշանալ մեր սրտին»։ Մենք պետք է պահենք մեր ցանկապատի ներսում այն, ինչը սնուցում է մեզ, և դրսում թողնենք այն, ինչը կարող է վնասել մեզ։ Կարծ աասած՝ սահմաններն օգնում են մեզ պահել լավ բաները ներսում և վատ բաները՝ դրսում։ Սահմանները հսկում են մեր բանծները (Մատթեոս 7:6), որպեսզի մարդիկ չզղոհանան դրանք։ Սահմանները պահում են մարգարիտները ներսում, իսկ խոզերին՝ դրսում։ Սահմանները ցույց են տալիս, թե ո՞վ ենք մենք։ Դրանք սահմանում են, թե ի՞նչ է «ես»-ը և ի՞նչ այն չէ։ Սահմանը ցույց է տալիս ինձ, թե որտեղ եմ ես ավարտվում և որտեղ է սկսում մեկ ուրիշը՝ ինձ սեփականատիրության զգացում հաղորդելով։

Ի՞նչ այն չէ

Կարծ աասած՝ սահմանները պատեր չեն։ Աստվածաշունչը չի ասում, որ մենք պետք է «պարսպված» լինենք այլ մարդկանցից։ Այն պատվիրում է մեզ «մեկ» լինել նրանց հետ (Չովհաննես 17.11)։ Մենք պետք է հասարակական փոխհարաբերություններ ունենանք մարդկանց հետ։ Բայց ցանկացած հասարակության մեջ բոլոր անդամներն ունեն իրենց տարածքը և սեփականությունը։ Կարևորն այն է, որ սեփականության սահմաններն այնքան անցանելի լինեն, որ մարդիկ կարողանան ներս գալ, բայց և այնքան ամուր, որ վտանգը չկարողանա ներս թափանցել։

Աստված և սահմանները

Սահմանների հասկացությունը բխում է Աստծո էությունից։ Աստված սահմանում է Իրեն որպես որոշակի, առանձին էակ, և Նա պատասխանատվություն է կրում Իր համար։ Նա սահմանում է Իր անձը և պատասխանատվություն է վերցնում Իր անձի համար՝ ասելով մեզ, թե ի՞նչ է Նա մտածում, զգում, ծրագրում, թյույլ տալիս և արգելում, սիրում և ատում։

Նա նույնպես սահմանում է Իրեն՝ առանձնացնելով Իր արարչագործությունից և մեզանից։ Նա տարբերում է Իրեն մյուսներից։ Նա ասում է մեզ, թե ո՞վ է Ինքը և ո՞վ Ինքը չէ։ Օրինակ՝ Նա ասում է, որ Ինքը սեր է, և որ Ինքը խավար չէ (Ա Չովհաննես 4:16, 1.6)։

Բացի այդ՝ Նա սահմաններ ունի Երրորդության ներսում։ Զայրը, Որդին և Չոզին մեկ են, բայց միևնույն ժամանակ Նրանք առանձին Անձեր են՝ սեփական սահմաններով։ Ամեն Մեկն ունի Իր անհատականությունը և պարտավորությունները, նաև կապ Իրար հետ և սեր Միմյանց հանդեպ (Չովհաննես 17:24)։

Աստված նույնպես սահմանափակում է այն, թե ի՞նչ է կարելի Իր տարածքում։ Նա հակառակվում է մեղքին և թյույլ է տալիս, որ մարդը կրի իր վարքի հետևանքները։ Նա հսկում է Իր տունը, և արգելում է չար բաներին մուտք գործել այդտեղ։ Նա ներս է հրավիրում այն մարդկանց, ովքեր սիրում են Իրեն՝ միաժամանակ թյույլ տալով, որ Իր սերը հոսի դեպի նրանց։ Նրա սահմանների «դարպասները» համապատասխանաբար բացվում և փակվում են։

Ճիշտ այնպես, ինչպես որ Նա տվեց մեզ Իր «սնանությունը» (Ծննդոց 1:26), Նա տվեց մեզ անձնական պատասխանատվություն՝ սահմանների մեջ։ Նա ցանկանում է, որ մենք «իշխենք և տիրենք» ողջ երկրի վրա և պատասխանատու տնտեսներ լինենք այն կյանքում, որը Նա տվել է մեզ։ Մենք պետք է կանգնեցնենք այնպիսի սահմաններ, ինչպիսիք ունի Աստված, որպեսզի կարողանանք անել դա։

Ի՞նչ կա իմ սահմանների ներսում

Զգացունքները - չպետք է ո՛չ անտեսվեն, ո՛չ էլ չափից շատ կարևորվեն։ Աստվածաշունչը պատվիրում է վերահսկել ձեր զգացունքները և ուշադիր լինել դրանց հանդեպ։ Դրանք կարող են դրդել ձեզ բազմաթիվ բարի գործերի։ Բարի Սամարացու գուրթ դրեց նրան մոտենալ վիրավոր իսրայելացուն (Ղուկաս 10.33)։ Զայրը լցված էր գթասրտությամբ իր կրոնը որդու հանդեպ, և հանդիպելում այես զրկեց նրան (Ղուկաս 15.20)։ Զգացունքները ձեր սրտից են, և դրանք կարող են բացահայտել ձեր փոխհարաբերությունների վիճակը զգացում հաղորդելով։

Դիրքորոշումներ և հանձնություններ - Դիրքորոշումների խնդիրն այն է, որ մենք ձեռք ենք բերում դրանք շատ վաղ տարիքում։ Դրանք ձևավորում են մեր պատկերացումը սեփական անձի մասին և մեր վարքը։ Կան մարդիկ, ովքեր երբեք չեն վիճարկել իրենց դիրքորոշումները և հանձնությունները։ Նրանք կարող են զոհ դառնալ այն միտմանը, որի մասին խոսում էր Զիսուսը՝ նկարագրելով «մարդկանց ավանդությունը», ոչ թե Աստծո պատվիրանները կատարող մարդկանց (Մարկոս 7.8, Մատթեոս 15.3)։

Արժեքներ - Մենք արժևորում ենք այն, ինչը սիրում ենք և կարևոր ենք համարում։ Զածախ մենք պատասխանատվություն չենք ստանձնում այն բաների համար, որոնք բարձր ենք գնահատում։ Մենք ծուղակն ենք ընկնում՝ ավելի արժևորելով մարդկանց հավանությունը, քան Աստծո հավանությունը (Չովհաննես 12:43)։

Վարքագծեր - Վարքագծերը հետևանքներ ունեն։ Ինչպես Պողոսն է ասում, «ինչ որ մարդ սերմի, այն էլ կինձի» (Գաղատացիների 6:7-8)։ Եթե աշխատանքի գնանք, մենք աշխատավարձ կստանանք։ Եթե մարդկվենք, մենք ավելի առողջ կլինենք։ Եթե սիրով վարվենք այլ մարդկանց հետ, մենք ավելի մտերիմ փոխհարաբերություններ կունենանք։ Դակառակը նույնպես ճշմարիտ է. եթե ցանենք ծուլություն, անպատասխանատվություն կամ անվերահսկելի վարք, մենք կարող ենք ակնկալել, որ կինձենք աղքատություն, ծախողում և անփոյթ կյանքի արդյունքները։ Այս ամենը մեր վարքի բնական հետևանքներն են։

Նւտրություններ - Մենք պետք է պատասխանատվություն ստանձնենք մեր ընտրությունների համար։ Երբ սկսենք այսպես վարվել, մեր կյանքում կհասունանա Դոզու պտուղներից մեկը, որը կոչվում է «ժուժկալություն» կամ «ինքնավերահսկողություն» (Գաղատացիների 5:23)։

Սահմանափակումներ - Մեր օրինակը՝ Աստված է։ Իրականում Նա «սահանափակումներ չի դնում» մարդկանց վրա, որպեսզի «ստիպի նրանց» լավ վարվել։ Աստված չափանիշներ է որոշում, բայց Նա թյույլ է տալիս մարդկանց վարվել այնպես, ինչպես նրանք ցանկանում են, և հեռանում է նրանցից, երբ նրանք սխալ են վարվում՝ փաստորեն ասելով. «Դու կարող ես լինել այնպիսին, ինչպիսին ցանկանում ես, բայց այդ դեպքում դու չես կարող լինել Իմ տանը»։ Երկինքն ապաշխարող մարդկանց համար է, և այն պատրաստ է ընդունել բոլորիս։

Տաղանդներ - Դակադրեք այս երկու պատասխանները. «Լավ, բարի և հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ էիր, Ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտիր քո տիրոջ ուրախությունը», և «Զար՛ և ծույլ ծառա, գիտեիր, որ Ես հնձում եմ ուր որ չսերմեցի, և հավաքում եմ ուր որ չփռեցի։ Ուրեմն պետք էր, որ Իմ արծաթը սեղանավորներին տայիր, և Ես կգայի, տոկոսով կառնեի Իմը։ Արդ, առեք նրանից քանքարը և տվեք տաս քանքար ունեցողին…» (Մատթեոս 25.23, 26-28)։ Ոչ մի պատմություն Աստվածաշնչում չի նկարագրում Աստծուց որդաված պատասխանատվությունը տաղանդներ ունենալու և գործածելու համար այնպես, ինչպես այս առակը։

Թեև խոսքն այս առակում փոոի մասին է, այն նույնպես կիրառելի է ներքին տաղանդների և պարզվների համար։ Մեր տաղանդներն ակնհայտորեն մեր սահմանների ներսում են, և գտնվում են մեր պատասխանատվության շրջանակում։ Այնուամենայնիվ, մեր տաղանդների համար պատասխանատվություն տանձնելը հաճախ կարող է վախեցնել։ Բացի այդ՝ դա մշտապես կապված է ռիսկի հետ։

Մտքեր - Մեր միտքը և մտածոմունքները՝ Աստծո նմանության շատ կարևոր արտացոլանքն են։ Ոչ մի արարած այս երկրի վրա չունի մեր մտավոր կարողությունը։ Մենք միակ ստեղծագործությունն ենք, որը կանչված է սիրելու Աստծուն իր ամբողջ մտքով (Մարկոս 12:30)։ Պողոսը գրում է. «...գեթի ենք բռնում ամեն միտքը՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար» (Բ Կորնթացիների 10:5)։ Մեր մտքում սահմաններ որոշելու համար պահանջվում է երեք բան.

1. Մենք պետք է վերահսկենք մեր մտքերը. Շատերը չեն վերհսկում իրենց մտքերը։ Նրանք մեքենայորեն մտածում են այլ մարդկանց մտքերը՝ առանց նույնիսկ ըննելու դրանք։
2. Մենք պետք է ավելի շատ գիտություն ձեռք բերենք և ընդլայնենք մեր միտքը. Կա մեկ ոլորտ, որում մենք պետք է ավելի շատ զարգանանք՝ գիտություն Աստծո և Նրա խոսքի մասին։ Դավիթն ասաց Աստծո հուռքն իմանալու մասին. «Իմ անըը մաշված է ամեն ժամանակ՝ ցանկանալով Քո իրավունքներին... Իրավի որ Քո վկայություններն իմ ուրախություններն են և իմ խորհրդականները» (Սաղմոս 119:20, 24)։ Մենք նույնպես շատ ենք ենք իմանում Աստծո մասին՝ ուսումնասիրելով Նրա արարչագործությունը և Նրա գործերը։ Ճանաչելով այս աշխարհը՝ մենք հնազանդվում ենք երկրի և դրանում գտնվող ամեն ինչի վրա «իշխելու և տիրելու» պատվիրանին։
3. Մենք պետք է պարզեցնենք աղավաղված մտածելակերպերը. Բոլորս էլ հակված ենք սխալմամբ մեկնաբանել այն, ինչ կատարվում է մեր շուրջը, և կարող ենք աղավաղված մտքեր և զգացողություններ ունենալ։ Զավանաբար, այս աղավաղումներն ամենից հեշտությամբ նկատելի են անձնական փոխհարաբերությունների մեջ։ Մենք հազվադեպ ենք տեսնում մարդկանց այնպիսին, ինչպիսին նրանք իրականում են. մեր ընկալումն ավաղաղված է մեր փորձառությամբ և կանխակալ կարծիքներով այն մասին, թե ինչպիսին են մարդիկ։ Սա վերաբերվում է նաև այն մարդկանց, ում մենք շատ լավ կամ ժանաչում։ Մենք պարզ չենք տեսնում մեր այքերի «գերանների» պատճառով (Մատթեոս 7:3-5)

Մեր - Մեր տալու և սիրուն արձագանքելու կարողությունը՝ մեր կենսագյուն պարզևն է։ Աստված ստեղծեց մեր սիրտը՝ մեր էության կենտրոնը, Իր պատկերով։ Սիրո համար բացվելու և սեր պարզաելու կարողություններն անփոխարինելի են կյանքում։ Շատերի համար դժվար է թե՛ պարզաել, թե՛ ընդունել սերը՝ վիրավորանքի և վախի պատճառով։ Փակելով իրենց սրտերն այլ մարդկանց համար՝ նրանք դատարկ և անհեթեթ են զգում իրենք։ Աստվածաշունչը ցույց է տալիս մարդկային սրտի երկու գործառնությունը՝ շնորհքի և սիրո ներհոսքը և արտահոսքը։ Ահա թե ինչպես է Աստվածաշունչը պատվիրում մեզ սիրել. «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտով և քո բոլոր անձով և քո բոլոր մտքով... Սիրիր քո ընկերոջը քո անձի պես» (Մատթեոս 22:37, 39), և սեր ընդունել. «Մենք ազատորեն խոսել ենք ձեզ, կորնթացիներ, և լայն բացել ենք մեր սրտերը ձեզ։ Մենք չենք պահում մեր սերը ձեզանից, բայց դուք պահում եք ձերը մեզանից։ Որպես ազնիվ փոխանակում, - ես խոսում եմ, ինչպես իմ զավակների հետ, - դուք էլ լայն բացեք ձեր սրտերը» (Բ Կորնթացիների 6:11-13, NIV)։ Մեր սիրող սիրտը, ինչպես և մեր ֆիզիկական սիրտը, ունի թե՛ ներհոսքի, թե՛ արտահոսքի կարիք։ Եվ ինչպես սիրտը, ունի թե՛ կրկնապատկար, մեր սիրտը մկան է՝ վստահության մկան։ Այս վստահության մկանը պետք է օգտագործել և մարզել։ Եթե այս մկանը վնասվի, այն կսկսի դանդաղ գործել և կտկարանա։ Մենք պետք է պատասխանատվություն վերցնենք այս սիրո գործառնյթի համար, որն ունենք, և գործածենք մեր սիրտը։ Թե՛ թաքցրած, թե՛ մերժված սերը կարող են սպանել մեզ։